ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մարտի 2025 թվականի № 113-Ա

2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ներքին աուդիտի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2025 թվականի հունվարի 8-ի № 4-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ներքին աուդիտի ծառայության 2025 թվականի տարեկան ծրագրի երկրորդ եռամսյակի աշխատանքային կատարողականն ապահովելու նպատակով իրականացվող աուդիտորական առաջադրանքները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման հավելվածում նշված ներքին աուդիտի ենթակա միավորներում աուդիտորական առաջադրանքների իրականացումը վերապահել ներքին աուդիտի ծառայության աշխատանքային խմբի անդամներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԻՀԱԿՅԱՆ**

2025 թվականի մարտի 31
ք. Հրազդան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2025 թվականի մարտի 31-ի № 113-Ա որոշման

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՈՒԴԻՏՈՂԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ

Ներքին աուդիտի ենթակա միավորներ 2025 թվական			
Երկրորդ եռամսյակ			
Հ/հ	Անվանումը	Հասցեն	Աուդիտի տեսակը
1	«Աբովյանի Ն. Վանյանի անվան № 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	ք. Աբովյան	Համապատասխանության և կատարողականի աուդիտ
2	«Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն	ք. Եղվարդ	Համապատասխանության և կատարողականի աուդիտ
3	«Արգելի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	գ. Արգել	Համապատասխանության և կատարողականի աուդիտ
4	«Պառոշյանի Պ. Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	գ. Պառոշյան	Համապատասխանության և կատարողականի աուդիտ
5	«Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա» պետական փակ բաժնետիրական ընկերություն	ք. Ծաղկաձոր	Համապատասխանության և կատարողականի աուդիտ
6	«Կոտայքի Ս. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	գ. Կոտայք	Համապատասխանության և կատարողականի աուդիտ
7	«Գեղաշենի Ռ. Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	գ. Գեղաշեն	Համապատասխանության և կատարողականի աուդիտ
8	«Աբովյանի Արթուր Վանոյանի անվան № 6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն	ք. Աբովյան	Համապատասխանության և կատարողականի աուդիտ